ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ _____

«01» 09 2022 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Երևանի Հովհաննես Պողոսյանի անվան հ. 82 հիմնական դպրոց» ՊՈԱԿ

7ա դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Գևորգյան Մարի Լևոնի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022- 2023 » ուսումնական տարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Դասարանը բաղկացած է 28 աշակերտից, որոնցից 16-ը՝ տղա, 12-ը՝ աղջիկ: Դասարանի ավագն է Մաթևոսյան Էլինա: Դասարանում կա 3 ԿԱՊԿՈՒ աշակերտ՝ Հակոբյան Հարություն, Նազար Հայկ, Նալբանդյան Նարեկ: Դասարանում իշխում է համերաշխության մթնոլորտ:Աշակերտները միշտ պատրաստ են օգնել միմյանց: Հետևում են դասարանի մաքրությանը, պահպանում են դասարանի գույքը շատ կոկիկ:

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները

Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական բազմակողմանի աշխատանքների նպատակն է ձևավորել անձ և քաղաքացի, որը պետք է գիտակցի սեփական ազգի մշակույթի, լեզվի, պատմության,ավանդույթների կարևորությունն ու նշանակությունը, հարգի Հայաստանի պետական խորհրդանիշները, լինի հայրենասեր, կարևորի բարոյական չափանիշները և քրիստոնեական ու համամարդկային արժեքները,լինի ազնիվ, գթասիրտ, արդարամիտ, օրինապահ, գնահատի բարին, հարգի մեծերին, լինի մարդասեր, հանդուրժող:

Հայեցի դաստիարակություն

Հոգևոր դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:

Աստվածաշնչյան ընթերցումներ,պատգամների ուսուցում, հոգևոր երաժշտության ունկնդրում, այցելություններ եկեղեցի,տարբեր իրավիճակների քննարկում, նպատակը՝ պայքար աղանդների դեմ:

Գեղագիտական դաստիարակություն- *Խնդիրները՝*

Մշակույթը կրող, ստեղծագործական ակտիվություն ունեցող անձի ձևավորում: Զրույցներ, ընթերցումներ և քննարկումներ արվեստի, անվանի գրողների ստեղծագործություններից: Տարբեր տիպի երաժշտության ունկնդրումներ:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի, ակնածանք՝ հայ ազատամարտիկների նկատմամբ: Բնավորության մեջ ձևավորել հայրենասիրություն և ռազմարվեստ: Ճանաչել ազգային հերոսներին, դաստիարակել իսկական հայրենասեր,ազգասեր, քաջ, ազնիվ հայորդի: Կապ պահպանել բանակի զինվորների հետ: Ճանաչել պետական խորհրդանիշները: Այցելել <<Եռաբլուր>>:

Ֆիզիկական դաստիարակություն *Խնդիրները՝*

Ֆիզիկական զարգացմանն ուղղված պայմանների ստեղծում, վնասակար սովորությունների հանդեպ բացասական վերաբերմունքի ձևավորում:

Զրուցել <<Առողջ մարմնում՝ առողջ հոգի>> թեմայով: Խոսել անձնական հիգիենայի և ճրվա ռեժիմի մասին: Քննարկումներ կատարել պորտաձևերի շուրջ, հորդորել հաճախակել սպորտի:

Աշխատանքային դաստիարակություն *Խնդիրները՝*

Աշխատանքային հմտությունների և կառուցողական վերաբերմունքի խթանում:

Երեխայի մեջ սեր արթնացնել աշխատանքի նկատմամբ: Զրույց տանել <<Ձեռնարկատիրություն>> և <<Ֆինանսական կրթության>> դասընթացի շուրջ և կատարել քննարկումներ: Զրուցել արհեստների և մասնագիտությունների մասին:

Բնապահպանական դաստիարակություն *Խնդիրները՝*

Բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի ձևավորում :

Սեր, հոգատարություն սեմանել բնության, շրջակա միջավայրի նկատմամբ: Խոսել կանաչ տարածքի, ծառերի, բուսականության դերի ու նշանակության մասին: Այցելել այգիներ, մաքրել միջավայրը, խնամել ծառերը:

Դպրոց-ընտանիք կապը *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն, որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց-ընտանիք կապը, որպեսզի ավելի լավ սովորեն:*

Կապ ապահովել աշակերտի, ուսուցչի, ծնողի և դպրոցի միջև: Տարբեր եղանակներով ծնողին իրազեկել իր երեխայի վարքի և առաջադիմության մասին: Կազմակերպել հանդիպումներ անհատական բնույթի:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ին կիսամյակ		2-րդ կիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	Կազմակերպչական հարցեր ա) դասարանի ակտիվի ընտրություն	02.09.2022թ.	

	բ)դասագրքերի բաշխում		
II	Զրույց <<Ինչով կարելի է հպարտանալ՝ խոսելով Հայաստնի մասին>> ա)<< Հայաստանը պատմության քառուղիներում>>:	09.09.2022թ.	Կատարվել է
III	Զրույց՝ <<Ազնիվ և անկեղծ հարաբերություն մեր դասարանում >> թեմայով	16.09.2022թ.	Կատարվել է
IV	Զրույց՝ նվիրված Հայաստանի անկախության 31-ամյակին	23.09.2022թ.	Կատարվել է
V	Քննարկում <<Ինչի եմ պատրաստ հանուն հայրենիքի>> ա) 44-օրյա պատերազմի հերոսները	30.09.2022թ.	Կատարվել է
VI	Զրույց << Իմ սիրելի ուսուցիչը>> թեմայով	07.10.2022թ.	Կատարվել է
VII	Զրույց <<Գիրքը հոգևոր հաց է>> թեմայով	14.10.2022թ.	Կատարվել է
VIII	Քննարկում <<Հայրենասիրությունը սկսվում է ընտանիքից >> թեմայով	21.10.2022թ.	Կատարվել է
IX	Զրույց <<Մեր շրջապատը և մեր վերաբերմունքը>> թեմայով	04.11.2022թ.	
X	Քննարկում <<ԻՆՉ է կոնֆլիկտը>> <<Ինչ է խաղաղությունը>> թեմայով	11.11.2022թ.	
XI	Զրույց <<Ինչպես նայել ճշմարտության աչքերին>> թեմայով	18.11.2022թ.	
XII	Զրույց <<Ինչ է ապատեղեկատվությունը>> թեմայով	25.11.2022թ.	
XIII	Զրույց <<Ինչպես վարվել արտակարգ իրավիճակում>> թեմայով	02.12.2022թ.	
XIV	Զրույց <<Ով է իսկական ընկերը>> թեմայով	09.12.2022թ.	
XV	Զրույց <<Ինչպես դիմավորել Ամանորը>> թեմայով	16.12.2022թ.	
XVI	<<Ինչպես պատրաստել պատի թերթ>>	23.12.2022թ.	
XVII	Բանավեճ <<Ուժեղ լինել, նշանակում է…>>		
XVIII	Զրույց <<Համակարգչի դերն իմ կյանքում>>		
XIX	Զրույց <<Հպարտ եմ քեզնով, հայ զինվոր>>		
XX	Զրույց <<Նրա մասին, ով ամեն օր իմ կողմին է>>		
XXI	Զրույց <<Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները>>		
XXII	Զրույց <<Լավ մարդիկ ավելի շատ են, քան…>>		
XXIII	Զրույց <<Ինչպես նայել ճշմարտության աչքերին>>		
XXIV	Զրույց <<Ինչպես հասկանալ մարդկանց>>		
XXV	Զրույց <<Ինքնավերլուծություն, ինքնաանդրադարձ և գնահատում>>		
XXVI	Զրույց <<Ով եմ ես: Որտեղ եմ հիմա: Ուր եմ ուզում հասնել>>		
XXVII	Զրույց <<Գիրքը, ընթերցանությունը և ես>>		

XXVIII	Զրույց <<Ում եմ համարում գեղեցիկ>>, <<Մայրս>>		
XXIX	Զրույց <<Ում եմ համարում ուժեղ>>		
XXX	Զրույց <<Հայ ժողովրդի անցած ուղին՝ ապրիլի 24 1915>>		
XXXI	Զրույց <<Անարդար արարքներ>>		
XXXII	Զրույց <<Իմ երկրի պատմության հերոսական էջերը>>		
XXXIII	Զրույց <<Ճանաչենք մեր հայրենիքը>>		
XXXIV	Զրույց <<Դպրոցական հաճելի հուշեր>>		